

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Լեռնանոց
ՄԱՐԶ	Լոռի



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մակերես՝ 16.39 կմ²

Բնակչություն՝ 1566

Գյուղը հիմնադրվել է 1860-ական թվականներին: Նրա առաջին բնակիչները եկել են Սպիտակ (նախկին Համամլու) գյուղից, որոնք սերում են Պարսկաստանի Խոյ, Սալմաստ գավառներից եկած գաղթականների սերունդներից: Գյուղը տեղակայված է Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային թեքության ճյուղավորություններից մեկի հովտում, որտեղով ժամանակին անցել է ռազմավարական նշանակություն ունեցող խճուղային ճանապարհը, որով անցել են առևտրական քարավանները և ռազմական գումակն ու ռազմամթերքը տեղափոխող սայլերը: Այն կառուցվել է ցարական Ռուսաստանի միջոցներով և ղեկավարությամբ, ծառայել է որպես կապի միջոց Թիֆլիս-Երևան անխախտ կապն ապահովելու համար: Այդ ճանապարհի մասին դեռևս տեղեկություններ են մեզ հասել անգամ 1804-05թթ. ռուս-պարսկական պատերազմում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակներից: Գյուղին տրվել է Լեռնանցք անունը հենց այն պատճառով, որ այս ճանապարհը (Համամլու- Ալազյազ) կտրում-անցնում է Սպիտակը լեռնանցքով, որի բարձրությունը 2115 մետր է: Գյուղի անունը մինչև 1950-ական թթ. Սպիտակ էր, 1950-ական թթ. գյուղի անունը փոխվեց Լեռնանցքի, իսկ Սպիտակ անունը տրվեց Համամլուին:

Գյուղը ունեցել է եկեղեցի կառուցված 1870-ական թ. /զանգակատունը ավելի ուշ՝ 1910թ./: Եկեղեցին երկրաշարժի հետևանքով ավերվել է և այժմ վերակառուցվել:

Գյուղը երկրաշարժի պատճառով հիմնովին ավերվել է և վերակառուցվում է, ընդ որում Նոր-Լեռնանցքը կառուցվում է գյուղից մոտ 2-2.5 կմ դեպի հյուսիս, Սպիտակ տանող ճանապարհի արևմտյան կողմում՝ Սպիտակ քաղաքի հարևանությամբ:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հյուսիսային կողմում ձգվում են Բազումի լեռները: Գյուղի միջին բարձրությունը ծովի մակարդակից շուրջ 1700մ է: Գյուղը հարավային, արևելյան եւ արևմտյան կողմերից շրջապատված է լեռներով, որոնք ունեն հյուսիսային թեքության, պատած են ալպիական բուսականությամբ, հարուստ են սառնորակ աղբյուրներով: Դրանց ջրերով գոյանում է առու, որը հոսում է գյուղի միջով ու հասնում Սպիտակի միջով հոսող Չիչխան գետի, ապա Փամբակ գետի ջրերին: Գյուղը ունի բարեխառն կլիմա, գյուղի տարածքը թեք է, հանդակները կտրված, մշակվում են հիմնականում ցորեն, գարի, խոտաբույսեր, կարտոֆիլ, կաղամբ այլ բանջարեղեններ: Ծառատեսակներից աճում են տանձենի, խնձորենի, սալորենի և այլ մրգեր:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	200-230
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-20
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	+30

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց	
--	--

հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	105
3.2) մարզկենտրոնից (կմ)	30
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	70
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	5
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	5
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	6
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1700
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	1639կմ ²
6. Սահմանակից համայնքների անվանումները	Սպիտակ, Սարամեջ, Սիփան, Ավշե ն
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	lernancq@mail.ru
8. Համայնքային պաշտոնական կայքի հասցեն	www.lernantsq.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093322239
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	091222239
11. Համայնքի հեռախոսային կոդը	0255
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1810
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1450
2. Գրանցված ծնունդների քանակը	9
2. Մահացության դեպքերի քանակը	8
3. Ամուսնությունների քանակը	9
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	355
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	123

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

7. Կենսաթոշակառուների քանակը	157
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	71

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	14120
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	132

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	1638.77
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1307.53
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	136.2
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	330
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	63
7. Խոզերի գլուխաքանակը	13
8. Գյուղատնտեսական տեխնիկա	6
8.1 տրակտորներ (քանակը)	5
8.2 կոմբայններ (քանակը)	1
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	355

9. ԵՆԹԱԿԱՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո

3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	18
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	
6.2 Էքսկավատորների քանակը	
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	
6.4 Գրեյդերների քանակը	
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	
6.9 Ավտոաշտարակների քանակը	
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	44881.75	44810.12
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	3668.38	3949.84
2.1 հողի հարկ	1555.5	1597.67
2.2 գույքահարկ	2112.88	2352.17
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	27556.2	27556.2
3.1 դոտացիա	27556.2	27556.2
3.2 սուբվենցիա		
4. Մուտքեր հողի օտարումից	0	312.0

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	35052.0	30567.0

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	4086,0	3282,8

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	8600.0	7796.8

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	7
1.1 համայնքային ծառայողներ	3
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	23371.57
3. Ավագանու անդամների թվաքանակը	7

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
մշակույթի տուն և մարզադահլիճ	մշակույթի տան և մարզադահլիճի կառուցում
մանկապարտեզ	մանկապարտեզի անավարտ շենքի կառուցում
ասֆալտապատում	միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում
հակակարկտային կայան	հակակարկտային կայանի տեղադրում